

**ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ  
ՀԱՄԱԽՈՒՄԲԸ  
Բաբայան Մ. Վ.**

Հոդվածում ներկայացված են մաքսային ծառայողի արդյունավետ գործունեությունը պայմանավորող հոգեբանական բաղադրիչների համախումբը: Թեմայում ընդգծված է հոգեբանական որակների կարևորությունը, որը թույլ է տալիս առանձնացնել հոգեբանական ասպեկտների կարևորությունը պրակտիկ գործունեության մեջ: Առանձնացրել ենք նաև կոնկրետ հոգեբանական առանձնահատկություններ, որակներ, որոնց առկայությունը կարող է բարձրացնել մաքսային ծառայողի գործունեության արդյունավետությունը: Մաքսային ծառայողի արդյունավետ գործունեության համար առանցքային տեղ ու նշանակություն ունի վերջինիս պրոֆեսիոգրամման:

**Բանալի բառեր.** մաքսային ծառայություն, մաքսային ծառայող, հոգեբանական բաղադրիչներ, հոգեբանական գիտելիքների բազա, արդյունավետ գործունեություն:

Այսօր ամբողջ աշխարհում կարևոր և առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մաքսային ծառայության համակարգը: Մաքսային ծառայությունը այն կառույցն է, որը մշտապես առանցքային նշանակություն ունի պետության տնտեսական զարգացման և արտաքին առևտրի կառավարման գործում: Մաքսային մարմինները, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության, տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի և ներքին շուկայի պաշտպանվածության ապահովողը, կիրառում են մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված նորմերը և վերահսկում են դրանց

կատարումը: Մաքսային ծառայությունն այն կառույցն է, որի հիմնական առաքելությունն ուղղված է տնտեսության և հասարակության պաշտպանությանը: Այս շրջանակներում առանձնակի ուշադրության է արժանի այնպիսի կարևորագույն մարտահրավերների դիմագրավումը, ինչպիսիք են մաքսային գործի բնագավառում կատարվող հանցագործությունների և մաքսային կանոնների խախտումների պայքարը: Ահաբեկչության անընդհատ ահագնացող տեմպերը, թմրամիջոցների, զենքի, մշակութային և պատմական նշանակություն ունեցող ապրանքների մաքսանենգ ճանապարհով տեղափոխման ուղիների և մեթոդների կատարելագործումը հանգեցրել են իրավապահ ոլորտում նոր խնդիրների ստեղծմանը, դրանց լուծման ուղղված պետության անհապաղ միջամտության անհրաժեշտությանը: Այդ իսկ պատճառով ծառայության ընթացքում անհրաժեշտ պայման է մաքսային ծառայողի արդյունավետ գործունեությունը, որն ուղղված է մեր երկրի բնակչության անվտանգության ապահովմանը, քաղաքացիների իրավունքների և հետաքրքրությունների պաշտպանությանը, կանոնակարգի պահպանմանը: Մաքսային ծառայողի գործունեությունը սկսվում է պետական սահմանային անցակետերից, որտեղ մաքսային ծառայողի հիմնական խնդիրներից են՝ անհրաժեշտության դեպքում հատուկ միջոցառումների ձեռնարկում, հասարակական կարգի պահպանում, մաքսային վերահսկողության շրջանակներում մաքսային կանոնների խախտման կանխարգելում, իրավախախտների դեմ պայքար, մաքսային ծառայողի ակտիվ մասնակցություն միջազգային ահաբեկչության դեմ պայքարին և այլն [3]:

Հոդվածի նպատակն է՝

- ներկայացնել «մաքսային ծառայություն» հասկացության ընդհանուր բնութագիրը,
- բնութագրել մաքսային ծառայողների հոգեբանական բաղադրիչների համախումբը,
- թվարկել մաքսային ծառայողի արդյունավետ գործունեությանը նպաստող գործոնները,
- ուսումնասիրել մաքսային ծառայողի մոտիվացիոն գործոնները:

Թեմայի արդիականությունը հետևյալն է. յուրաքանչյուր երկրի անվտանգությունը սկսվում է սահմանից, իսկ սահմանի անվտանգության երաշխիքը խելացի, գրագետ, կիրթ, զարգացած ծառայողների գործունեությունն է, իսկ մաքսային ծառայողի գործունեությունը սկսվում է պետական սահմանային անցակետերից,

որտեղ ծառայողները պետք է պահպանեն հասարակական կարգը, մաքսային վերահսկողության շրջանակներում իրականացնեն մաքսային կանոնների խախտման կանխարգելում, իրավախախտների դեմ պայքար, ահաբեկչության դեմ պայքար, որոնք հնարավոր չէ իրականացնել առանց հոգեբանական կոնկրետ որակների և հատկությունների:

ՀՀ մաքսային ծառայությունը մաքսային մարմինների միասնական համակարգ է: ՀՀ մաքսային համակարգը ստեղծվել է 1992թ. հունվարի 4-ին:

Է. Չեերի, Ա. Բողայրովի, Ա. Դերկաչի, Ե. Կլիմովի աշխատություններում հեղինակները վերլուծության են ենթարկել մաքսային ծառայողի ինչպես հոգեբանական, այնպես էլ սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, նրանց հետաքրքրվածությունը մասնագիտական աճի նկատմամբ:

Մաքսային ծառայողի մասնագիտական և ծառայողական պարտականությունների ուսումնասիրումը թույլ է տալիս մեզ հասկանալ, թե ծառայության ընթացքում ինչ տեսակի խնդիրների հետ կարող է բախվել մաքսային ծառայողը, իմաստավորել այդ խնդիրների լայն շրջանակը: Ծառայողական գործունեության ուսումնասիրումը ցույց է տալիս, որ բոլոր բարդ պահանջների կատարումը բարձրացնում է մաքսային ծառայողի պատասխանատվությունը և մասնագիտական աճի հավանականությունը:

Հոգեբանական բաղադրիչների կարևորությունը կարող ենք ընդգծել արտասահմանյան որոշ սահմանային անցակետերի մաքսային ծառայողների աշխատանքի ընդունման օրինակը ներկայացնելով: Ծառայող մասնագետներին ընտրելիս կազմում են մարդկանց խմբեր: Համապատասխան որակների ախտորոշումից հետո միայն այդ խմբերից կարող են անցնել իրենց աշխատանքային պարտականություններին:

Այսօր ժամանակակից հոգեբանության մեջ մշակված է մաքսային ծառայողի ընդհանրացված մոդելը, որը իր մեջ ներառում է 3 հետևյալ բլոկները՝ մասնագիտական-գործնական որակներ, մոտիվացված որակներ, ֆիզիկա-հոգեբանական որակներ [1; էջ 47]:

Մաքսային ծառայողի արդյունավետ գործունեության համար կարևոր դեր ունի ճանաչողական ոլորտը, մասնավորապես՝ ուշադրության բաշխվածությունը, ուշադրության կենտրոնացավածությունը, քանի որ մարդկային մեծ հոսքը վերահսկելը մաքսային

ծառայողից պահանջում են մեծ ջանքեր, հոգեբանական կոնկրետ որակների համախումբ: [5]

Ժամանակակից մաքսային ծառայության աշխատակիցը պետք է իմանա մաքսային մարմնի կառավարման հիմքերը, պետք է կարողանա վերլուծել կոնկրետ իրավիճակներ՝ հաշվի առնելով դրանց հետևանքները, պետք է կարողանա ստեղծել դրական բարոյահոգեբանական մթնոլորտ, դրական միջանձնային փոխհարաբերություններ, անկախ մասնագիտությունից՝ նա պետք է իմանա մաքսային ծառայության հոգեբանական առանձնահատկությունները, պատրաստ լինի վերլուծել առանձին մարդկանց, անհատների վարքը: Կասկածելի վարքը, անբնական նյարդայնությունը, մաքսային ծառայողի կողմից տրվող պրովոկացիոն հարցերի պատասխանները – այս բոլորը մաքսային աշխատակիցը պետք է հաշվի առնի, անհրաժեշտության դեպքում նաև պետք է հետևի և օպերատիվ միջամտություն ցուցաբերի: Նշվածն իրագործելու համար մաքսային ծառայողին անհրաժեշտ են կայուն, կոնկրետ հոգեբանական որակներ, որոնք կարող են նպաստել ինչպես բնականոն միջանձնային հարաբերությունների ստեղծմանը, այնպես էլ կոնֆլիկտային իրավիճակների չեզոքացմանը, դրանց լուծմանն ուղղված համապատասխան մեթոդիկաների մշակմանը: Անհրաժեշտ հոգեբանական բոլոր որակների ամբողջականությունը թույլ կտա մաքսային ծառայողին մաքսային զննման ընթացքում կամ որևէ դիտում իրականացնելիս առանձնացնել քաղաքացու անձի տիպը, հասկանալ նրա շարժումների, ժեստերի, միմիկայի, բառերի, վարքի իրական լինելը: Դրանց շնորհիվ նա կարող է ստանալ ինֆորմացիա քաղաքացու մասին:

Մաքսային ծառայողը մասնագիտական գործունեության ընթացքում ապահովում է մաքսային օրենսդրության պահպանումը, պետության շահերի և իրավունքների պահպանումը, իրականացնում է վերահսկողություն ապրանքների տեղափոխման և տրանսպորտային միջոցների սահմանահատման ժամանակ: [4]

Մաքսային ծառայողի հոգեբանական որակները, առանձնահատկություններն ավելի շատ ուսումնասիրել են արտասահմանյան այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Ի. Ն. Կոլոբովան, Ռ. Ա. Սաֆարովը, Ա. Պ. Գալենտովան, Վ. Վ. Նեմիրիչը և այլք, որոնք, մանրամասն ուսումնասիրելով մաքսային ծառայողի գործունեությունը, փորձել են ներկայացնել մաքսավորի պրոֆեսիոգրաման, որը արտացոլում է նրա գործունեության առանձնահատկությունները: Մաքսավորը պետք է

ունենա լայն աշխարհայացք, ճիշտ գնահատի իր կենսափորձը, ունենա խոր, բազմակողմանի գիտելիքներ, ունենա կայուն համոզմունքներ, ունենա զարգացած կամային որակներ, մոբիլիզացնի իր ուժերը և այլն:

Ռ. Ա. Սաֆարովը առանձնացրել է մաքսային ծառայողի պրոֆեսիոգրամմայի հիմք հանդիսացող հետևյալ մի քանի կանոնապետությունները՝ իմացական, արժեքային, վարքային, կամային, կոմունիկատիվ, բնութագրական: Ըստ հեղինակի՝ վերը նշված ասպեկտներն ապահովում են մաքսային ծառայողի արդյունավետ գործունեությունը: Նա նշում է, որ որոշիչ դեր կարող են ունենալ նաև հոգեկան գործընթացները, որակները և մասնագիտությունը [2; էջ 433]:

Որոշ հեղինակների կարծիքով բոլոր մաքսային ծառայողները պետք է ունենան հոգեբանական գիտելիքների բազա, մաքսավորին հատուկ պատրաստվածություն: Որոշիչ է նաև մասնագիտական վարպետությունը, որը մեծամասնությամբ ակնհայտ դրսևորվում է զննման ընթացքում, օրինակ՝ տիպիկ մաքսանենգների ռեակցիայի ճանաչում, մաքսանենգ ապրանքների (զինմթերք, թմրադեղեր, զենք) տեղափոխման հնարավոր ուղիների, ձևերի իմացություն, տեխնիկական միջոցների, հաղորդակցման միջոցների լիարժեք տիրապետում, զենքի հետ վարվելակերպ և այլն:

Հոդվածի տեսական մասի հիման վրա առանձնացրել ենք գործնական մաս՝ իր հետազոտությունով հանդերձ: Հետազոտական մասին մասնակցել են ՀՀ ՊԵԿ ԱՄՎ Բազրատաշենի կետ-բաժնի մաքսային ծառայողները, որոնց հետ իրականացրել ենք Հերցերգի դրդապատճառների որոշման մեթոդիկան, որը հնարավորություն է տալիս մեզ առանձնացնել աշխատանքային դրդապատճառների 8 խումբ: Նշենք, որ տվյալ մեթոդիկան իրականացրել ենք բացառապես տղամարդկանց հետ (19 հոգի), քանի որ աշխատակազմի 99 տոկոսը կազմում են տղամարդիկ: Մեթոդիկան թույլ է տալիս մեզ որոշել ծառայողների աշխատանքային դրդապատճառների 8 խումբ՝ ֆինանսներ, հասարակության կողմից ընդունված/հարգված լինելը, պատասխանատվություն, հարաբերությունները ղեկավարության հետ, կարիերա, անձնական նվաճումներ, աշխատանքի էություն, համագործակցություն կոլեկտիվում [1, էջ 272]: Ամենաշատ միավոր հավաքած դրդապատճառները առաջնային են տվյալ աշխատողի համար: Գործնական մասում մենք ունեցանք հետևյալ պատկերը. 13 ծառայողի համար առաջնային գործոնը ֆինանսներն են, 1 հոգու մոտ՝

կարիերա, 2 հոգու մոտ՝ հարաբերությունները ղեկավարության հետ, 3 հոգու մոտ՝ անձնական նվաճումներ:

**Եզրահանգում:** Այսպիսով, մաքսային ծառայողի արդյունավետ գործունեության համար որոշիչ տեղ են զբաղեցնում նրա անհատական հոգեբանական առանձնահատկությունները, ճանաչողական ոլորտը՝ ուշադրության բաշխվածությունը, ուշադրության կենտրոնացվածությունը, օպերատիվ հիշողությունը, քանի որ մարդկային մեծ հոսքը վերահսկելը մաքսային ծառայողից պահանջում է մեծ ջանքեր, գիտելիքներ, հոգեբանական կոնկրետ որակների համախումբ, ինչպես նաև աշխատանքային փորձ: Ինքնավերահսկումը, ինքատիրապետումը, զսպվածությունը, մաքսային ծառայողի էթիկայի կանոնների պահպանումը ևս կարող են նպաստել վերջինիս արդյունավետ գործունեությանը:

**СОВОКУПНОСТЬ ПСИХОЛОГИЧЕСКИХ КОМПОНЕНТОВ,  
ОПРЕДЕЛЯЮЩИХ ЭФФЕКТИВНУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ  
ТАМОЖЕННИКА**

**Бабаян М. В.**

В статье представлены психологические компоненты, которыми обусловлена эффективная деятельность таможенного инспектора. Мы подчеркнули важность психологических качеств, которые позволяют выделить важность психологического аспекта в практической деятельности. В статье предьявлены конкретные психологические качества, которые могут поднять эффективность таможенной деятельности. Особое значение в таможенной службе имеет профессиограмма таможенного инспектора.

**Ключевые слова:** таможенная служба, таможенный инспектор, психологические компоненты, база психологических знаний, эффективная деятельность.

**THE SET OF PSYCHOLOGICAL COMPONENTS DETERMINING THE  
EFFECTIVE ACTIVITY OF A CUSTOMS OFFICER**

**Babayan M. V.**

The article presents the set of psychological components that determine the effective activity of a customs officer. The topic emphasizes the importance

of psychological qualities, which allows to distinguish the importance of psychological aspects in practical activities. We have also singled out specific psychological features, qualities, the existence of which can increase the efficiency of the customs officer's activity. A key place and importance for the effective activity of a customs officer is his professional registration.

**Keywords:** customs service, customs officer, psychological components, psychological knowledge base, effective activity.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան Մ., Ջավադյան Ա., Ամիրյան Դ. Անձը և պաշտոնը: Երևան: «Պետական ծառայություն» հրատարակչություն 2013: 342 էջ:
2. Зеер Э. Ф. Психология профессий. Учебное пособие для студентов вузов. 2-ое издательство. Москва. Академический проект. 2003. 149 с.
3. Столяренко А. М. Прикладная юридическая психология. Москва. – Юнити-данам 2001, 473 с.
4. <https://www.petekamutner.am/as.aspx?itn=asHistory> (17.06.2020)
5. [https://studopedia.ru/7\\_163752\\_lektsiya--eticheskie-aspekti-deyatelnosti-tamozhennikov.html](https://studopedia.ru/7_163752_lektsiya--eticheskie-aspekti-deyatelnosti-tamozhennikov.html) (09.07.2020)

#### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Բաբայան Մ. Վ.** – հայցորդ

Հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. փոստ՝ [maria.babayan.1994@mail.ru](mailto:maria.babayan.1994@mail.ru)

Տրվել է խմբագրություն՝ 14.09.2021

Գրախոսվել է՝ 12.11.2021